

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սեդա Գասպարյանը 70 տարեկան է)

Հավանաբար շատերն են առիթ (գուցե և պատճառ) ունեցել խորհելու-մտորելու «կինը թույլ էակ է» արտահայտության խորքային բովանադակության շուրջ: Այդ մտորումներն ավելի ուժգնանում են հայ ավանդասեր իրականության մեջ, մասնավորապես, կին-ամուսին, կին-մայր, կին-քույր, կին-ընկեր կենսաբանորեն և սոցիալապես պայմանավորված առաքելություններում:



Ծանոթանալով Սեդա Գասպարյանի կյանքին և գործունեությանը՝ ուզում ես պարզապես հպարտորեն ճշալ. «Ոչ, դու ուժեղ ես: Դու ուժեղ ես քո մայրական սրբաբույր նվիրումով, գործվագութ քույր կոչվելու իրավունքով, տիեզերական անհունի լույսերի մեջ «ապրող» ամուսնուղ հանդեպ հավերժական սիրո անեղծ հավատարմությամբ, անդավաճան և ամենահաս ընկեր լինելու իրողությամբ և, վերջապես, մանկավարժության և գիտության անդաստանի անդադրում մշակի ինքնամոռաց տքնանքով»:

Տասնյակ տարիներ են անցել այն օրից, երբ Սեդա Գասպարյանը՝ տակավին գեղադեմ մի աղջնակ, որպես ուսանողուհի՝ ոտք դրեց մայր բուհ և կմտածե՞ր, արդյոք, որ մի օր էլ իր առջև կբացվեն հայ գիտական մտքի Օլիմպոսի՝ ազգային ակադեմիայի վեհանիստ դռները...

... Ողջ կյանքի ընթացքում ոչինչ նրան չտրվեց հենց այնպես, որպես ճակատագրի հրամցրած պարզև, այլ նվաճվեց տքնաջան աշխատանքի բովում, մանկավարժության և գիտության հրաբխային խառնարանի բոցերում, որոնցում ոչ թե այրվեցին, այլ թրծվեցին նրա հրաբորբոք գիտամանկավարժական պրպտումները:

Եթե փորձենք ընդհանրացած ներկայացնել բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սեդա Քերոբի Գասպարյանի բազմամյա աշխատանքի արդյունքները, ապա կստացվի երկրաչափական մի պատկեր, մի բազմանկյուն, որի գագաթները, լատինական տառերով նշելու փոխարեն, կարելի կլինի անվանագրել նրա գործու-

նեության ոլորտներով. գիտական, մանկավարժական, գիտամեթոդական, գիտագործնական, հասարակական:

Ս. Գասպարյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատությունների. հոդվածներ, մենագրություններ, գիտամեթոդական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, բուհական դասագրքեր: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկուն է ու բազմաբովանդակ. լեզվի և ոճի հարցեր, լեզվապոետիկայի խնդիրներ, գործառական ոճագիտություն, վերասույթային հնչյունաբանություն, տեքստի մեկնաբանություն, թարգմանության տեսություն, հայագիտական խնդիրներ և այլն:

Թվարկված շարքում կարևոր տեղ են զբաղեցնում տեքստի՝ հասկապես գեղարվեստական տեքստի ըմբռնմանն ու մեկնաբանությանն առնչվող խնդիրները: Ու, թեև, շատ դեպքերում ուսումնասիրության առարկան գեղարվեստական խոսքի ոճական հնարներն են, որոնց քննությամբ զբաղվել են դեռ անտիկ ժամանակներից սկսած, այդուհանդերձ քննարկվում ու լուսաբանվում են ընդհանուր հենքային կարևորություն ունեցող բազմաթիվ դրույթներ ու մոտեցումներ, որոնք, իրենց հերթին, լույս են սփռում խոսքի գեղագիտական արժեքի վերհանման՝ նրա առաջադրած մարդակենտրոն տեսության վրա: Գեղարվեստական ստեղծագործության ընկալման, հասկացման ու մեկնաբանման մեջ շեշտադրելով հերմենևտիկ շրջանի շլայերմախերյան տեսության գործադրման կարևորությունը՝ գիտնականն առաջ է քաշում կոնկրետ մեթոդների (լեզվաոճական, լեզվաբանաստեղծական, գրականագիտական) համալիր արդյունավետ կիրառության անհրաժեշտության գաղափարը:

Կարևոր ձեռքբերում է և այն, որ Ս. Գասպարյանն առաջին անգամ իրականացրել է գեղարվեստական համեմատության ուսումնասիրություն՝ գործառական-հաղորդակցական մոտեցման կիրառմամբ, որն էլ հնարավորություն է տվել իմաստավորելու համեմատության երկու տարատեսակ՝ փոխանվանական (ճանաչողական) և փոխաբերական (լեզվաբանաստեղծական):

Վաստակաշատ գիտնականն առաջ է քաշել նաև այն գաղափարը, որ համեմատության՝ վերը նշված փոխանվանական և փոխաբերական տիպերի կիրառությունը որոշիչ դեր ունի լեզվի գործառության երկու հիմնական՝ գեղարվեստական և ոչ գեղարվեստական (տվյալ դեպքում՝ գիտական) ոլորտների սահմանազատման հարցում, ինչը հիմնավորվում է նաև դրանց առոգաբանական բնութագրերի տարբերությամբ:

Պրոֆեսոր Ս. Գասպարյանի անմիջական ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել ու գիտական շրջանառության մեջ է մտել թեկնածուական 25 և դոկտորական 4 ատենախոսություն: Անգնահատելի է նրա ներդրած ավանդը հանրապետությունում անզլերենի ուսումնասիրության, ինչպես նաև

բուհական ասպարեզում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ուղղորդման ու կազմակերպման գործում: Այսօր, արդեն, նրա հիմնադրած անգլագիտական հետազոտությունների լեզվաբանական դպրոցը պատշաճ համարում ունի ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս:

Ս. Գասպարյանը գերազանց հետազոտող է, հրաշալի գիտական ղեկավար: 1994 թ. դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո, լինելով գերմանական լեզուներ մասնագիտությամբ առաջին և միակ դոկտորը Հայաստանում, ջանք չի խնայել մեզանում անգլերենագետ գիտնականների եկող սերնդի համար ճանապարհ հարթելու գործում: Եվ այդ թվականներից առ այսօր ղեկավարում է ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնը:

Նա գիտական, մասնագիտական և հասարակական նախաձեռնությունների հեղինակ է. միջազգային և հանրապետական գիտաժողովներ, գիտական սեմինարներ, կլոր սեղաններ, քննարկումներ, հետաքրքիր ու արժեքավոր դասախոսություններ ինչպես մեր, այնպես էլ արտերկրի մասնագիտական լսարանի համար:

Գիտական զեկուցումներով հանդես է եկել Անգլիայում, Բուայիայում, Իսպանիայում, Արգենտինայում, Հունաստանում, Լեհաստանում, Սլովակիայում, Ռուսաստանում, Թուրքիայում և այլուր կազմակերպված գիտաժողովներում ու սեմինարներում: Այսօր նա անդամակցում է հայրենական և միջազգային բազմաթիվ գիտական ընկերությունների, իսկ 2003 թվականից Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի (AASE) / Եվրոպական ֆեդերացիայի անդամ / հիմնադիր նախագահն է:

Ս. Գասպարյանի գիտական աշխատությունները հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով լույս են ընծայել հայաստանյան և միջազգային հեղինակավոր հրատարակիչներ:

Լինելով XX դարասկզբի եղերական իրադարձություններից մի կերպ փրկված ընտանիքի մի շրուղ՝ բազմավաստակ գիտնականը չէր կարող իր գիտական մտորումների կենտրոնում չփայփայել մի օր էլ այդ իրադարձություններին այս կամ այն կերպ անդրադառնալու գաղափարը: Եվ դա նա կատարեց պատվախնդրորեն. Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցի շեմին մեծագույն ուշադրության և տարբեր բնագավառների գիտնականների քննարկման առարկա դարձավ նրա «The Armenian Genocide: A Linguocognitive Perspective» մենագրությունը: Բացի այն, որ աշխատությունը լեզվաբանական հետաքրքիր քննություն է և, ըստ էության, միանգամայն նոր խոսք հայ լեզվաբանության պատմության մեջ, այն մեծ արժեք ունի նաև ցեղասպանության միջազգային ճանաչման՝ քաղաքական և դիվանագիտական ոլորտներում ընթա-

ցող թեժ քննարկումներում ճանաչողական մի նոր լույս սփռելու առումով: Եվ այս արժեքավոր գրքի տեսքով մի փոքրիկ հուշաքար էլ ինքը փորագրեց Եղեռնի նահատակների հիշատակին:

Գիտական, գիտամանկավարժական և հասարակական անդուլ գործունեության, այդ ոլորտներում ներդրած հսկայածավալ ավանդի և ակնառու նվաճումների համար Ս. Գասպարյանն արժանացել է պետական, կառավարական և գերատեսչական բարձր պարգևների. Գիտության վաստակավոր գործիչ (2013), Վարչապետի մեդալ (2009), Լավագույն գիտական աշխատանք (2010), ԵՊՀ արժաթե մեդալ (1999), ԵՊՀ ոսկե մեդալ (2006): 2013 թ. ընդգրկվել է ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից իրականացվող բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների մրցույթի հաղթողների կազմում:

Միրելի և հարգարժան պրոֆեսոր, ինքնամոռաց նվիրումի բովերում անցել են տասնյակ տարիներ, և եթե այսօր մի պահ ետ պտտես քո կյանքի կինոժապավենը, առաջին կադրերում անպայմանորեն կնկատես, թե քանի՜-քանի՜ անգամ արցունքոտվել են քո աչքերը, երբ լսել, անգամ երգել ես «Քելե լառ»-ն ու «Դլե-յաման»-ը: Էլի կալեկոծվի հոգիդ, երբ տեսնես, թե քանի՜-քանի՜ անգամ ուժգին տրոփել է սիրտդ, երբ, արտաքուստ հանգիստ, մոտեցել ես գիտաժողովների ամբիոններին: Վերստին կփոթորկվի ներաշխարհդ ու հոգիդ նորովի կճաշակի այն զգացումներն ու բերկրանքը, երբ սիրել ես մեկին, երբ ծնվել է որդիդ, երբ գուրգուրել ես թոռնիկիդ:

Գուցե և արցունքներ կհոսեն, երբ մտովի վայելես քո ուսանողների և աշխատակիցների՝ անթաքույց սիրով ու հարգանքով քեզ վերաբերվելու հիշողությունները:

Անցյալից եկած թե՛ տխուր և թե՛ ուրախ հուշեր են բույն դրել հայացքիդ մեջ, իսկ աչքերիդ լույսի ցուրերում առկայծում են տերյանական մթնշաղի անուրջները: Բազմիմաստ լռություն է ծվարել խոսքիդ մեջ, լռությանդ մեջ՝ նոր խոսք...

Շնորհավոր հոբելյանդ, սիրելի դասախոս, հարգարժան գործընկեր, վաստակաշատ գիտնական:

ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ